ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020

IDBank

Բովանդակություն

1 Բանկի մասին համառոտ

Բանկի կառավարման մարմինները 04
Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 05
Բանկը որպես հաշվետու թողարկող 06

2 Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը 08
ՀՀ ֆինանսական համակարգը 09

3 Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների ամփոփում 11
Ֆինանսական հաշվետվություններ 12

4 Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում 17
Արձագանք համաճարակային իրավիճակին 20

5 Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 23
Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 24

Պատասխանատու անձանց հայտարարություն 26

1

Բանկի մասին համառոտ

Բանկի կառավարման մարմինները 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 05

Բանկը որպես հաշվետու թողարկող 06

Բանկի բաժնետերերը



Բանկի վարչությունը

Միեր Աբրահամյան

Արման Ասատրյան

Կարեն Նալբանդյան

Սերգեյ Առաքելյան

Ռաֆիկ Սուվարյան

Անուշիկ Խաչատրյան

Տիգրան Մխիթարյան

Բանկի խորհուրդը

Վարդան Դիլանյան

Կարեն Մարգարյան

Ալեքսանդր Խաչատուրյան

Ելենա Խաչվանքյան

Ալեքսեյ Կոմար

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

Մենք նորարար ենք – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

Մենք թափանցիկ ենք – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

Մենք վստահելի ենք – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբերհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

Մենք հավատարիմ ենք – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

Մենք թիմային ենք – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:

Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

IDBank-ի պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում

2020 թվականի փետրվարին IDBank-ի՝ 2019 թվականի 2-րդ թողարկման պարտատոմսերը ցուցակվել են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ ընդգրկվելով պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:

Պարտատոմսերը թողարկվել են 2019 թվականի նոյեմբերին՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 27 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5.0% արժեկտրոնային տոկոսադրույքով:

Արդյունքում՝ ներկայումս երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 4 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 15 մլն ԱՄՆ դոլար և 250 մլն ՀՀ դրամ:

IDBank-ի կողմից թողարկված պարտատոմսերը սովորաբար մեծ պահանջարկ են վայելում, ինչը վկայում է Բանկի նկատմամբ վստահության բարձր մակարդակի մասին:

IDBank-ը նախատեսում է շարունակել պարտատոմսերի շուկայում իր ակտիվ գործունեությունը՝ հաճախորդներին տրամադրելով շահավետ ներդրումներ իրականացնելու հնարավորություններ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓ Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
- ✓ Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓ Գնաճի ռիսկ

30/06/2020թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2

Մակրոտնտեսական ակնարկ

ՀՀ տնտեսությունը 08

ՀՀ ֆինանսական համակարգը 09

ՀՀ տնտեսությունը

Տնտեսական ակտիվության ցուցանիշ*



Տնտեսության ճյուղերի փոփոխության դինամիկա*



Արտահանման և ներմուծման փոփոխության դինամիկա*



Սպառողական գների ինդեքս*



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե
* Ցուցանիշները ներկայացված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

ՀՀ ֆինանսական համակարգը

ՀՀ բանկային համակարգի ավանդների ծավալ (մլրդ ՀՀ դրամ)



ՀՀ բանկային համակարգի վարկերի ծավալ (մլրդ ՀՀ դրամ)



1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների միջին տոկոսադրույքներ (%)



1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույքներ (%)



Փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

3

Ֆինանսական հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների ամփոփում 11

Ֆինանսական հաշվետվություններ 12

Ֆինանսական արդյունքների ամփոփում

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ հարկումից հետո (մլրդ ՀՀ դրամ)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդներին տրված վարկեր ու փոխառություններ (մլն ՀՀ դրամ)



Ֆինանսական հաշվետվություններ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական արդյունքների մասին

«30» Հունիսի 2020 թ.

«ԱԴԻ Բանկ» ՓԲԸ 22 թ. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01/04/2020 - 30/06/2020	01/01/2020 - 30/06/2020	01/04/2019 - 30/06/2019	01/01/2019 - 30/06/2019
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	3,420,192	6,722,112	2,983,170	5,768,438
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,247,927)	(2,476,582)	(1,099,983)	(2,141,274)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**2,172,265**	**4,245,530**	**1,883,187**	**3,627,164**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	310,924	579,456	207,836	366,167
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(90,828)	(192,989)	(93,217)	(151,265)
Ստացված զուտ միջնորդավճարներ և այլ վճարներ		**220,096**	**386,467**	**114,619**	**214,902**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	245,975	22,799	176,635	292,358
Այլ գործառնական եկամուտներ	6	214,576	654,500	154,777	291,094
Գործառնական եկամուտներ		**2,852,912**	**5,309,296**	**2,329,218**	**4,425,518**
Կորուստներ արժեզրկումից	7	(793,672)	(845,612)	89,731	184,775
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,389,986)	(2,801,792)	(1,217,312)	(2,350,189)
Այլ գործառնական ծախսեր	9	(353,773)	(626,995)	(153,244)	(279,052)
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**315,481**	**1,034,897**	**1,048,393**	**1,981,052**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	(357,153)	(392,044)	(249,795)	(448,302)
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		**(41,672)**	**642,853**	**798,598**	**1,532,750**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		**313,092**	**(385,615)**	**116,461**	**189,645**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)		(43,838)	(50,611)	(794)	5,496
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)		426,801	(443,318)	144,790	229,897
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ		(69,871)	108,314	(27,535)	(45,748)
Համապարփակ ֆինանսական արդյունք		***271,420***	***257,238***	***915,059***	***1,722,395***
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	11	(0.1)	0.9	1.2	2.3
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	11	(0.1)	0.9	1.2	2.3

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/20

Վարչության նախագահ _____ Մ.Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

«30» Հունիսի 2020 թ.

«ԱԿԴԻ Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող.13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրությունները	30/06/20	31/12/2019թ. (Ստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ		4,210,166	6,636,325
ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներ	12	9,546,242	10,395,743
Պահանջներ բանկերի նկատմամբ	13	6,191,975	4,720,732
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	61,412	4,312
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	15	4,583,865	4,766,731
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	16	86,653,694	79,563,048
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	9,200,057	8,762,820
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	22,906,524	23,100,375
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	19	7,901,988	7,417,049
Բռնագանձված ակտիվներ	20	1,672,993	1,476,007
Այլ ակտիվներ	21	3,072,600	3,213,389
Ընդամենը՝ ակտիվներ		***156,001,516***	***150,056,531***
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	22	20,560,840	22,550,599
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	78,452,095	71,479,114
Այլ փոխառություններ	24	1,652,945	1,764,545
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	25	7,546,165	6,700,803
Հետաձգված հարկային պարտավորություններ	26	1,342,486	1,389,630
Այլ պարտավորություններ	27	2,634,113	2,616,206
Ընդամենը՝ պարտավորություններ		***112,188,644***	***106,500,897***
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	28	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Պահուստներ՝		675,934	1,061,549
Գլխավոր պահուստ		107,760	107,760
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		105,601	110,808
Իրական արժեքով չափվող ֆին. ակտիվների վերագնահատ. պահուստ		462,573	842,981
Չբաշխված շահույթ (վնաս)		4,150,989	3,508,136
Ընդամենը՝ կապիտալ		***43,812,872***	***43,555,634***
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		***156,001,516***	***150,056,531***

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/07/20*

Վարչության նախագահ _____ Մ.Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի մասին

«30» Հունիսի 2020 թ.

«ԱԴԻ Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան 01/01/19-ից 30/06/19թ.	Հաշվետու ժամանակաշրջան 01/01/20-ից 30/06/20թ.
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**1,360,099**	**3,052,933**
Ստացված տոկոսներ	4,848,005	6,324,996
Վճարված տոկոսներ	(2,377,699)	(2,086,857)
Ստացված կոմիսիոն գումարներ	366,167	579,456
Վճարված կոմիսիոն գումարներ	(151,265)	(192,989)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)	264,986	207,088
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	886,594	788,260
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(1,705,395)	(1,883,822)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(771,294)	(683,199)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**7,236,011**	**(4,245,618)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)	(10,021,384)	(11,190,478)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)	(9,767,501)	(10,988,317)
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	(253,883)	(202,161)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	17,257,395	6,944,860
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	9,945,833	6,239,750
այլ գործառնական պարտավորությունների ավելացում/(նվազում)	7,311,562	705,110
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	**8,596,110**	**(1,192,685)**
Վճարված շահութահարկ	(33,000)	(5,000)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	**8,563,110**	**(1,197,685)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**x**	**x**
Այլ ֆինանսական ակտիվներում ներդրումների նվազում (ավելացում)	(3,262,534)	(256,042)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)	-	(671,648)
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(60,544)	(286,237)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների (ձեռքբերում) օտարում	(507,919)	(525,675)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	**(3,830,997)**	**(1,739,602)**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**x**	**x**
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	1,000,000	(753,980)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	(3,277,858)	846,011
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(2,277,858)**	**92,031**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցություն դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(94,641)	(111,987)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**2,359,614**	**(2,957,243)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	11,264,389	17,144,330
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**13,624,003**	**14,187,087**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը *14/07/20*

Վարչության նախագահ _____ Մ.Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Խաչատրյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

«30» Հունիսի 2020 թ.

«ԱԿԴԻ Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Կարդանանց փող 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եռամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Իրական արժեքով՝ այլ համ ֆին արդ միջ չափվող ֆին ակտիվների վերագ պահուստ	Չբաշխված շահույթ (վնաս)	Ընդամենը կապիտալ
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)	33,971,850	5,014,099	107,760	110,808	106,977	952,628	**40,264,122**
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	1,532,750	**1,532,750**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	**189,645**	-	**189,645**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	5,496	-	**5,496**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	229,897	-	**229,897**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	(45,748)	-	**(45,748)**
Մնացորդը 2019թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)	**33,971,850**	**5,014,099**	**107,760**	**110,808**	**296,622**	**2,485,378**	**41,986,517**
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական)							
Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ (ստուգված)	33,971,850	5,014,099	107,760	110,808	842,981	3,508,136	**43,555,634**
Տարվա շահույթ (վնաս)	-	-	-	-	-	642,853	**642,853**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	**(5,207)**	**(380,408)**	-	**(385,615)**
Ֆինանսական արդյունքներ փոխանցված զուտ օգուտ (վնաս)	-	-	-	(5,207)	(45,404)	-	**(50,611)**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ (վնաս)	-	-	-	-	(443,318)	-	**(443,318)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերվող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	-	108,314	-	**108,314**
Մնացորդը 2020թ. հունիսի 30-ի դրությամբ (չստուգված)	**33,971,850**	**5,014,099**	**107,760**	**105,601**	**462,573**	**4,150,989**	**43,812,872**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/20

Վարչության նախագահ _____ Մ.Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա.Խաչատրյան

4

Ռազմավարական հաշվետվություն

Ռազմավարական ծրագրերի իրագործում 17

Արձագանք համաճարակային իրավիճակին 20

Ռազմավարական ծրագրերի իրագործում

Բանկը, հավատարիմ մնալով իր՝ Հայաստանի լավագույն թվային բանկ դառնալու տեսլականին, շարունակում է ռազմավարական ուղղությունների զարգացումը՝ նորարարական նախագծերի իրականացման միջոցով:
2020 թվականի առաջին կիսամյակում ևս Բանկը շարունակել է իրագործել իր հավակնոտ ծրագրերը և ընդլայնել իր կողմից մատուցվող թվային ծառայությունների կազմը:

IDBank-ը Հյուսիսային 6 հասցեում բացել է իր ֆլագմանյան գրասենյակը

IDBank-ն իր նոր մասնաճյուղով բանկային նոր մշակույթ է ներդրել: Բանկի նոր ֆլագմանյան գրասենյակը իր տեսակի մեջ միակն է տարածաշրջանում. այստեղ մեկտեղված են մի շարք ծառայություններ, որոնք հաճախորդները հաճախ ստիպված են լինում փնտրել տարբեր վայրերում:

Երևանի սրտում գտնվող գրասենյակում այսուհետ կարելի է կատարել բանկային գործառնություններ, օգտվել Privilege banking-ի ծառայություններից, ստանալ իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ հատուկ առանձնացված սրահում, CoffeeShop Company-ի Espress It սրճարանում վայելել իսկական սուրճ կամ համտեսել համեղ ուտեստներ, իսկ անհրաժեշտության դեպքում աշխատել coworking-ում:

IDBank-ն առաջինը Հայաստանում ներկայացրեց Visa Signature պրեմիում դասի քարտը

IDBank-ի նոր ֆլագմանյան մասնաճյուղի բացման հանդիսավոր արարողությունն ավարտվել է Հայաստանի համար նոր՝ Visa Signature պրեմիում քարտի շնորհանդեսով:

Քարտը հնարավորություն է տալիս քարտապանին ստանալ պրեմիում դասի անհատական սպասարկում և օգտվել առաջարկվող մի շարք արտոնություններից՝ Cashback անկանխիկ գնումներից, բարձր եկամուտ դեբետային քարտի դրական մնացորդին, վարկային գիծ ունենալու հնարավորություն, զեղչ Idworking-ի ծառայություններից օգտվելու համար: Visa Signature քարտը տալիս է նաև օդանավակայանների պրեմիում սրահներ անվճար մուտքի հնարավորություն, Lounge Key, 24/7 Կոնսիերժ ծառայություն, Ճանապարհորդական ապահովագրություն, բժշկական աջակցություն, հատուկ պրեմիում դասի զեղչեր, արտոնյալ առաջարկներ ամբողջ աշխարհում և շատ այլ առավելություններ:

Ռազմավարական ծրագրերի իրագործում

Օնլայն Ռոքեթ Վարկ՝ հրթիռային արագությամբ

IDBank-ը գործարկել է «Ռոքեթ վարկ» ծառայությունը, որը հնարավորություն կտա առանց տնից դուրս գալու հրթիռային արագությամբ ստանալ մինչև 5 մլն ՀՀ դրամ վարկ: Ծառայությունը հասանելի է ինչպես IDBanking.am առցանց հարթակի, այնպես էլ Idram հավելվածի միջոցով: Ցանկացած պահի ցանկացած վայրից անհրաժեշտ է ընդամենը կատարել մի քանի պարզ քայլ, և վարկի գումարը կլինի հաճախորդի հաշվի՝ առանց որևէ թաքնված միջնորդավճարի:

IDBank-ի քարտերն այսուհետ հնարավոր է ակտիվացնել բանկոմատի միջոցով

Հաշվի առնելով թվայնացման ժամանակակից միտումները՝ IDBank-ն այլևս քարտի հետ թղթային PIN կոդ չի տրամադրում: Հաճախորդն ինքն է ակտիվացնում քարտը բանկոմատի միջոցով և ստեղծում է քառանիշ PIN կոդ, ինչը, բացի հարմարավետությունից, ապահովում է նաև տեղեկատվական անվտանգության էլ ավելի բարձր մակարդակ:

Դրամական փոխանցումները կարելի է ստանալ առանց Բանկ այցելելու

DBank-ի հաճախորդներն իրենց դրամական փոխանցումները կարող են ստանալ առանց Բանկ այցելելու՝ անմիջապես www.idbanking.am հարթակի միջոցով՝ 24/7 ռեժիմով: Պարզապես անհրաժեշտ է՝ www.idbanking.am հարթակում ընտրել դրամական փոխանցման համակարգը, այնուհետև մուտքագրել փոխանցման տվյալները: Կատարելով այս պարզ գործողությունները՝ առավելագույնը 2 ժամվա ընթացքում գումարը հասանելի կլինի հաճախորդի նախընտրած հաշվին :

IDBank-ը միացել է «1 դրամի ուժը» նախաձեռնությանը

IDBank-ն Idram ընկերության «Մի դրամի ուժը» նախաձեռնության ռազմավարական գործընկերն է: Ծրագիրն ուղղված է Հայաստանում կենսական և ռազմավարական կարևորություն ունեցող մի շարք ոլորտների զարգացմանը:
IDBank-ը նույնպես հավատում է, որ ամեն ինչ սկսվում է 1 դրամից, և այսուհետ՝ նաև IDBanking.am առցանց հարթակի և IDBank-ի տերմինալների միջոցով ցանկացած վճարումից 1 դրամ կփոխանցվի «Մի դրամի ուժը» նախաձեռնությանը:

Ռազմավարական ծրագրերի իրագործում

IDBank-ն ու «Արմենիան Լիզինգ Քամփնին» համագործակցության պայմանագիր են ստորագրել

IDBank-ի ու Արմլիզինգի միջև կնքված համագործակցության պայմանագրի համաձայն՝

- ✓ Արմլիզինգը կմատուցի մասնագիտացված լիզինգային ծառայություններ IDBank-ի կողմից առաջարկվող հաճախորդներին: Սա նշանակում է, որ բացի լիզինգի բուն գործընթացի սպասարկումից հաճախորդները կստանան ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի այլ ծառայություններ, ներառյալ խորհրդատվություն:
- ✓ Արմլիզինգը կիրականացնի լիզինգային գործարքների ֆինանսավորումը ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ կստանա ֆինանսական միջոցներ IDBank-ից (միջբանկային վարկ կամ վարկային գիծ) իրականացվող նախագծերի ֆինանսավորման համար:
- ✓ Կիրականացվեն ֆինանսավորման նախագծեր, որոնք կմեկտեղեն երկու Ընկերությունների ուժեղ կողմերը շուկայում՝ հաճախորդներին համաֆինանսավորման սկզբունքով տրամադրելով նաև հատուկ առաջարկներ:
- ✓ Արմլիզինգի հաճախորդները IDBank-ում կսպասարկվեն անհատական պայմաններով:

«Էներջի» վարկ IDBank-ից՝ ՓՄՁ-ներին

IDBank-ը կնպաստի էներգաարդյունավետության բարձրացմանն ու այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավորությունների ընդլայնմանը:

«Էներջի» վարկով ՓՄՁ-ները հնարավորություն կունենան ստանալ մինչև 500 մլն ՀՀ դրամ, իսկ առանձին դեպքերում նաև՝ մինչև 1 մլրդ ՀՀ դրամ վարկային միջոցներ, որոնք կարող են ուղղվել արդիական էներգաարդյունավետ սարքավորումների և մեքենաների ձեռքբերմանը, ենթակառուցվածքների կառուցմանը և ներդրվել այն նախագծերի մեջ, որոնք օգտագործում են վերականգնվող էներգիայի աղբյուրներ:

Վարկատեսակն ուղղված է Հայաստանի տնտեսությունում այլընտրանքային էներգիայի կիրառման զարգացմանը և բիզնեսի արդյունավետության բարձրացմանը՝ թույլ տալով ՓՄՁ-ներին նվազագույն ծախսերով ստանալ ավելին:

Արձագանք համաճարակային իրավիճակին

COVID-19 համավարակով պայմանավորված երկրում ստեղծված արտակարգ դրության պայմաններում ևս Բանկը շարունակում է իրագործել իր հավակնոտ ծրագրերը՝ միաժամանակ արագ արձագանքելով երկրում ստեղծված իրավիճակին: Բանկը շարունակում է մշակել առաջ շարժվելու, զարգանալու և հաճախորդներին ևս այդ հնարավորություններն ընձեռելու ճանապարհները:

IDBank-ն ընդառաջել է իր վարկառուներին

Հաշվի առնելով նոր կորոնավիրուսի տարածմամբ երկրում ստեղծված իրավիճակն ու հոգ տանելով հաճախորդների մասին՝ IDBank-ը որոշում է կայացրել ընդառաջել իր վարկառուներին:

Ֆիզիկական անձ հաճախորդները հնարավորություն են ստացել որոշակի ժամանակահատվածում վարկային մարումներն իրականացնել իրենց հարմար ժամանակ, իսկ այդ ընթացքում վարկային պարտավորությունների չկատարման դեպքում վարկառուի նկատմամբ տույժ և տուգանք չի կիրառվել, վարկը չի դասակարգվել և վարկառուի վարկային պատմությունը չի տուժել:

Բանկը արտոնություն է սահմանել նաև հյուրատնային, ռեստորանային, տուրիստական, զվարճանքի ոլորտներում գործող, ինչպես նաև ստեղծված իրավիճակով պայմանավորված էական բացասական հետևանքներ կրած իրավաբանական անձ հաճախորդների համար, որոնց նկատմամբ կիրառվել է անհատական մոտեցում:

IDBank-ը միացել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ՀՀ կառավարության ծրագրերին

Կարևորելով երկրի տնտեսական ակտիվության խթանումը՝ IDBank-ը կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների շրջանակում սկսել է վարկային հայտերի ընդունումը:

Ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվելու տնտեսավարողներին՝ նրանց հնարավորություն տալով ներգրավել մատչելի ֆինանսական ռեսուրսներ, որոնք կօգտագործվեն նոր մարտահրավերների պայմաններում գործունեության շարունակականությունն ապահովելու համար:

Կենսաթոշակառուներն իրենց քարտերը կստանան անվճար առաքմամբ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորոնավիրուսային վարակը հատկապես վտանգավոր է տարեցների համար՝ կենսաթոշակառուներն այլևս ստիպված չեն լինի այցելել Բանկ իրենց կենսաթոշակային քարտերը ստանալու համար:

Կենսաթոշակառուների քարտերը ՀՀ ամբողջ տարածքում կառաքվեն անվճար և քարտապաններին կհանձնվեն՝ պահպանելով անվտանգության բոլոր նորմերն ու առողջապահության նախարարության ցուցումները:

Արձագանք համաճարակային իրավիճակին

Մնա տանը, վճարիր ու փոխանցիր անհպում

Idram-ի և IDBank-ի համատեղ թվային հարթակն առաջարկում է անձնական ֆինանսների կառավարման ոլորտում նմանը չունեցող ամբողջական գործիքակազմ՝ հնարավորություն տալով հաճախորդներին առանց տնից դուրս գալու օգտվել առավել քան 300 բանկային և վճարահաշվարկային ծառայություններից:

IDBank-ի դեբետային քարտերը կարելի է պատվիրել արդեն նաֆ առցանց

IDBank-ի և Idram-ի թվային հարթակն անընդմեջ կատարելագործվելով՝ այժմ արդեն հնարավորություն է տալիս ցանկացած վայրից, առանց ժամանակ կորցնելու պատվիրել IDBank-ի Visa Gold, Visa Signature, Visa Infinite տեսակի դեբետային քարտերը՝ ցանկացած արժույթով և անվճար առաքման հնարավորությամբ:



IDBank-ի Visa քարտերով առանց PIN կոդի մուտքագրման անհպում վճարման սահմանաչափը կրկնապատկվել է

Անհպում վճարումներն այսօր առավել, քան արդիական են: Այսուհետ առանց PIN կոդի մուտքագրման վճարում կատարելու սահմանաչափը նոր թողարկվող քարտերի համար 20.000 ՀՀ դրամ է: IDBank-ի Visa pay wave քարտերով տարբեր վաճառակետերում վճարում կատարելու համար պարզապես անհրաժեշտ է քարտը մոտեցնել POS տերմինալին:

IDBank-ն այս քայլով հնարավորություն է տալիս իր հաճախորդներին չվտանգել իրենց առողջությունը, և ավելի մեծ գումարի չափով վճարում կատարել անգամ քարտն առանց վաճառողին փոխանցելու:

5

Ռիսկերի կառավարում

Հիմնական տնտեսական նորմատիվներ 23

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ 24

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:

2020 թվականի 1-ին կիսամյակում Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 25.6% (պահանջվող նվազագույն մեծությունը 12% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 23.5% և 133.5% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Բանկը գտնվում է վարկային ռիսկերի կառավարման շարունակական զարգացման և արդիական մեթոդների ներդրման գործընթացում, մասնավորապես՝ Բանկում ներդրվում են վարկային ռիսկի կառավարման նոր արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model):

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով՝

- ✓ Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել,
- ✓ Իրացվելիության նորմատիվների վերլուծություն,
- ✓ Սթրես թեստավորում:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ժեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով, նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական սկզբունքն է նպաստել Բանկի արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման գործընթացին՝ միաժամանակ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործրաքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով, ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱՅԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը: Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն, և հետևաբար, որակապես այլ բնույթի ռազմավարական ռիսկ կրելու հնարավորություն:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

30/06/2020թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. IDBank-ի՝ 2020 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ են և լիարժեք, բոլոր էական առումներով համապատասխանում են իրավական ակտերով սահմանված պահանջներին:

2. 2020 թվականի երկրորդ եռամսյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2020 թվականի հունիսի 30-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ֆինանսական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Ռաֆիկ Սուվարյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Տիգրան Մխիթարյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)

IDBank